ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

# ՈՐՈՇՈՒՄ

17 մայիսի 2016 թվականի **թիվ 46** քաղ. Մոսկվա

**Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 799 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնիկական կանոնակարգման մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 9 հավելված) 4-րդ կետին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 5-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի ««Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու վերաբերյալ» 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 799 որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ հավելվածի համաձայն:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 17-ի
թիվ 46 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 799 որոշման մեջ կատարվող**

1. 2.2-րդ կետում «արտադրանքի համապատասխանության (հաստատում)» բառերը փոխարինել «տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության» բառերով:

2. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու ու արտադրանքի համապատասխանության գնահատումն (հավաստումն) իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտների ցանկը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի
2011 թվականի սեպտեմբերի 23-ի
թիվ 799 որոշմամբ (Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի մայիսի 17-ի
թիվ 46 որոշման խմբագրությամբ)

ՑԱՆԿ

ստանդարտների, որոնք ներառում են «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 009/2011) պահանջները կիրառելու եւ կատարելու եւ տեխնիկական կարգավորման օբյեկտների համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ

| Թիվ ը/կ | Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | 5-րդ հոդվածի 3-րդ կետ | ԳՕՍՏ 790-89-ի 2-րդ բաժին | Տնտեսական օճառ՝ պինդ եւ ձեռքի օճառ: Ընդունման կանոններ եւ չափումների կատարման մեթոդներ | |
| 2 | | ԳՕՍՏ 7983-99-ի 6.8-րդ կետ | Մածուկներ ատամի: Ընդհանուր տեխնիկական պայմաններ | |
| 3 | | ԳՕՍՏ 29188.0-91-ի 2-րդ բաժին | Օծանելիքակոսմետիկական արտադրատեսակներ: Ընդունման կանոններ, փորձանմուշների | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |

| Թիվ ը/կ | Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | ընտրություն, զգայարորոշման փորձարկումների մեթոդներ | |
| 4 | | ԳՕՍՏ 29188.2-91 | Կոսմետիկական արտադրատեսակներ: Ջրածնային ցուցանիշ pH–ի որոշման մեթոդ | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |
| 5 | | ԳՕՍՏ 29188.2-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Ջրածնային ցուցանիշ pH–ի որոշման մեթոդ | |
| 6 | | ՍՏԲ 1736-2007-ի 6.8-րդ կետ | Բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ՝ հեղուկ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ | |
| 7 | | ԳՕՍՏ Ռ 51577-2000-ի 6.8-րդ կետ | Բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ՝ հեղուկ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ | |
| 8 | | ՍՏ ՂՀ ԳՕՍՏ Ռ 51577-2003-ի 6.8-րդ կետ | Բերանի խոռոչի հիգիենայի միջոցներ՝ հեղուկ: Ընդհանուր տեխնիկական պայմաններ | |
| 9 | 5-րդ հոդվածի 3-6-րդ կետեր | ԳՕՍՏ 29188.0-2014-ի 3-րդ եւ 4-րդ բաժիններ | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Ընդունման կանոններ, փորձանմուշների ընտրություն, զգայարորոշման փորձարկումների մեթոդներ | |
| 10 | 5-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ եւ 6-րդ կետեր | ԳՕՍՏ ISO 212-2014 | Եթերայուղեր: Փորձանմուշների ընտրություն | |
| 11 | 5-րդ հոդվածի 4-րդ կետ | ԳՕՍՏ ISO 18416-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Candida albicans–ի հայտնաբերում | |
| 12 | | ԳՕՍՏ ISO 21148-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Միկրոկենսաբանական | |

| Թիվ ը/կ | Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | | | հսկողությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ | |
| 13 | | ԳՕՍՏ ISO 21149-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Մեզոֆիլային աէրոբ միկրոօրգանիզմների հաշվարկ եւ հայտնաբերում | |
| 14 | | ԳՕՍՏ ISO 21150-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Escherichia coli–ի հայտնաբերում | |
| 15 | | ԳՕՍՏ ISO 22717-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Pseudomonas aeruginosa–ի հայտնաբերում | |
| 16 | | ԳՕՍՏ ISO 22718-2013 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Միկրոկենսաբանություն: Staphylococcus aureus–ի հայտնաբերում | |
| 17 | | ՍՏ ՂՀ ԻՍՕ 16212-2011 | Կոսմետիկա: Միկրոկենսաբանություն: Խմորասնկերի եւ բորբոսասնկերի քանակության հաշվարկ | |
| 18 | | ՍՏ ՂՀ ԻՍՕ 18415-2009 | Կոսմետիկա: Միկրոկենսաբանություն: Սպեցիֆիկ եւ ոչ սպեցիֆիկ միկրոօրգանիզմների հայտնաբերում | |
| 19 | 5-րդ հոդվածի 5-րդ կետ | ԳՕՍՏ 26927-86 | Հումք եւ մթերքներ՝ սննդային: Սնդիկի որոշման մեթոդ | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |

| Թիվ ը/կ | Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 20 | | ԳՕՍՏ 26930-86 | Հումք եւ մթերքներ՝ սննդային: Մկնդեղի որոշման մեթոդ | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |
| 21 | | ԳՕՍՏ 26932-86 | Հումք եւ մթերքներ՝ սննդային: Կապարի որոշման մեթոդ | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |
| 22 | | ԳՕՍՏ 30178-96 | Հումք եւ մթերքներ՝ սննդային: Թունավոր տարրերի որոշման ատոմային աբսորբման մեթոդ | կիրառվում է մինչեւ 2018 թվականի հուլիսի 1-ը |
| 23 | | ԳՕՍՏ 31676-2012 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Սնդիկի, կապարի, մկնդեղի, կադմիումի զանգվածային մասերի որոշման գունաչափական մեթոդներ | |
| 24 | | ԳՕՍՏ 32936-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Սնդիկի որոշման ինվերսիոն վոլտամպերաչափական մեթոդ | |
| 25 | | ԳՕՍՏ 32937-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Կապարի որոշման ինվերսիոն վոլտամպերաչափական մեթոդ | |
| 26 | | ԳՕՍՏ 32938-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Մկնդեղի որոշման ինվերսիոն վոլտամպերաչափական մեթոդ | |
| 27 | | ԳՕՍՏ 33021-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Մկնդեղի զանգվածային մասի որոշումը հիդրիդների գեներացմամբ ատոմային աբսորբման մեթոդով | |

| Թիվ ը/կ | Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի տարրերը | Ստանդարտի նշագիրը | Ստանդարտի անվանումը | Ծանոթագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 28 | | ԳՕՍՏ 33022-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Սնդիկի զանգվածային մասի որոշումը անբոց ատոմային աբսորբման մեթոդով | |
| 29 | | ԳՕՍՏ 33023-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Կապարի զանգվածային մասի որոշումը էլեկտրաջերմային ատոմիզացմամբ ատոմային աբսորբման մեթոդով | |
| 30 | 5-րդ հոդվածի 6-րդ կետ | ԳՕՍՏ 32893-2014 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Անվտանգության թունաբանական եւ կլինիկական լաբորատոր ցուցանիշների գնահատման մեթոդներ | |
| 31 | | ԳՕՍՏ 33483-2015 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Անվտանգության կլինիկական լաբորատոր ցուցանիշների որոշման եւ գնահատման մեթոդներ | կիրառվում է 2016 թվականի հուլիսի 1-ից |
| 32 | | ԳՕՍՏ 33506-2015 | Օծանելիքակոսմետիկական արտադրանք: Անվտանգության թունաբանական ցուցանիշների որոշման եւ գնահատման մեթոդներ | կիրառվում է 2016 թվականի հուլիսի 1-ից |
| 33 | 6-րդ հոդվածի 4-րդ եւ 5-րդ կետեր | ԳՕՍՏ ISO 24444-2013 | Կոսմետիկական արտադրանք: Արեւապաշտպան փորձարկումների մեթոդներ: Արեւապաշտպան գործոնի (SPF) որոշումը կենդանի օրգանիզմների մոտ (in vivo) | |